ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ շինարարներ, ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, սրտանց շնորհավորում եմ բոլորիդ մասնագիտական տոնի առթիվ:

Աշխարհում պետությունները ճանաչվում են ոչ միայն իրենց տնտեսությամբ ու մշակույթով, այլև ճարտարապետությամբ:

Դարեր շարունակ հայ շինարարի ձեռքով կերտված շենքերը դարձել են հայ ժողովրդի ուրույն դիմագիծը, աշխարհում մենք ճանաչելի ենք դարձել նաև հայ կառուցապատողի մտքի թռիչքով:

Հայ շինարարի մուրճի զնգոցը չի լռել ո՛չ խաղաղության և ո՛չ պատերազմի ժամանակ: Անգամ կռվի մեջ մենք շարունակել ենք կառուցել, մեր ընկած շենքերը կրկին վեր են խոյացել իրենց ողջ շուքով:

Սիրելի՛ շինարարներ, ցանկանում եմ, որ այսօր ձեր կերտած շենքերը լինեն հայ ճարտարապետական մտքի արժանի շարունակությունը, քարի և շաղախի հետ կարողանաք սերունդներին փոխանցել հայ մշակույթի յուրօրինակ ձեռագրերը:

Իմ և ողջ Փամբակ համայնքի անունից շնորհակալություն եմ հայտնում յուրաքանչյուրիդ՝ ձեր ամենօրյա քրտնաջան աշխատանքի և նվիրումի համար: Շարունակեք ստեղծել և արարել խաղաղության մեջ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան